

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ — ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Ապրիլ 29

Թիւ 93 — Խ

هزارايداق غزنه تسي

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Գաւառաց համար	60 ,
Արասահման	15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային նիւթեր
Վրձինք ու կտաւ
Խղմանանքին դիմաց (Նորավեպ)
Խմաստաւորական բառարան
Իտալիան հասած (Վիպակ)
Բնութիւնն ու կիւնը (Ֆերբուած)
Տես՝ եւ զործ. Մանկավարժութիւն
Ներագործութիւն

Բ. Պ.
» »
Թէոդոր
Ա. Լ.
Ս. ԲԱԲԷԼԵԱՆ
Մ. ԹԱՊԱԳԵԱՆ
Մ.
Բ. Պ.

40 փարա 40

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ կը ծախուի. 1. Գաւառացի, Արմեն Էֆ. Զպուգնեանի Դեղարանը. — 2. Սա-
մաթիա, Կայարանին մօտ, ծխավաճառ Յարութիւն Աղա Էթերհանեանի խանութը. — 3. Կա-
մուրջի գլուխը, ջրավաճառ Նեան աղա Օզանեանի եւ (նախկին ջրավաճառ Պօղոս ա-
ղայի խանութը). — 4. Զրավաճառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալեց,
Ասնեան եւ Զարդարեան գրաստաններ. — 6. Բոլոր լրագրավաճառներուն եւ:

Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱՊԵՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ
ուղղակի Տնօրէնութեանս դիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապիէ հասցեի Թիւ 61

1900

Է Ք Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՑ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀԶՕՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՐՀՈՒԹԻՒՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 451 ՄԻԼԻՈՆ ՁԻՐԱՆՔ



1898ին՝ ԷՔԻԹԱՊԼ իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան 15³/, ՄԻԼԻՈՆ Ֆրանք շահաբաժին

[Այսինքն նոյն տարւոյ մէջ Ֆրանսական ՄԻԱՅԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկնը]:

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

ԷՔԻԹԱՊԼԻ չափ գործառնութիւն ունի

ԷՔԻԹԱՊԼԻ չափ պահեստի գրամ ունի

ԷՔԻԹԱՊԼԻ չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱԺԱՆ եւ աւելի ՇԱՀԱԻԷՏ ընծայել կեանքի ապահովագրութիւնը՝ որքան ԷՔԻԹԱՊԼ:

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՆՇԱՆԱՌՔ

ԼՆՆՈՒՆ

Բարիք եւ Կ. Պոլիս, Գրետի Լիոնէ

Անգղիոյ պաշտօն

Գրետի Լիոնէ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՑ ԹՈՒՐԳԻՈՑ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՍՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պահճէ Գարու, Անանիատի Խան

Պատկերագարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱԺԵԱՆ

Դին 4 դրու

Լոյս տեսաւ Ն. Պերպերեան մամուլի տպագրութեամբ, քաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն: Մայրաքաղաքիս Է՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փետրեմբեր 1900ի տպագրութեամբ, որ 208 էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատմական, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ու շահագործի:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայտարարէ մեծաքանակ 30 առ 100 զեղչով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուառ Ղազարօծ եւ ԸՆԿ.


Պատիւ ունինք ծանուցանել թէ վաճառատնէն փոխադրուած է Սահմանափակ Ժամ քիւ 1 եւ 2: Եւրոպայի բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, բարձր դերու անհուն պէտքերով ինքի միջոց պատրաստ ունի մեծաքանակ, ինչպէս նաեւ ժողովրդական համբաւ վայելող Եւրոպայի բժշկական մասնագիտական պատրաստ դեղերը ու ամէն տեսակ հանգային ջուրերը: Գաւառներէ եղած յանձնարարութիւնք մեզի ու փութով կը կատարուին, անմիջեղի կերպիւ աման գներով:

Դիմեցե՛ք եւ պիտի համոզուիք:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական և Քաղաքական



ԽՄԲԱԳԻՐ — ՏՆՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Ապրիլ 29

Թիւ 93 — Խ

ԱԶԳԱՅԻՆ ՆԻՇԵՐ



ԱԶԳԱՅԻՆ Պատրիարքարանի չըջանականերուն մէջ, Զատական տօնին առթիւ տիրող հանգարտութիւնը տակաւ կը փոխուի ժրջան գործունէութեան մը: Ինչպէս լրագիրք ծանուցին արդէն, Ս. Պատրիարք Հայրը շաբթուս երկիցս տեսակցեցաւ Դատական եւ Կրօնական գործոց Վսեմ. Նախարարին հետ, Պատրիարքարանի վերաբերեալ կարգ մը գործերու վրայ: Նոյնպէս կարեւոր խորհրդակցութիւններ ունեցաւ Կրօն. եւ Քաղ. Ժողովներու ատենապետներուն եւ ազգեցիկ անդամներուն հետ, անմիջական լուծման կարօտ խնդիրներու

մասին: Ազգային վարչութեան ժողովներուն ու Տեսուչ Խորհուրդներուն դիւաններն հիմա զբաղած են իրենց օրակարգերը կարգի դնելու, որոնք բաւական ծանրաբեռնուած են: Միւս կողմէ գաւառային անմիջական պէտքեր եւս առաւել քան երբեք կը կարօտին Պատրիարքարանի անմիջական հոգածութեան. ուստի ուրախառիթ է տեսնել որ երկար անգործութեան կը յաջորդէ խոստմեալից գործունէութիւն մը:

* * * Ազգ. Պատրիարքարանի Նպաստից Մետուկը, դատաւրկ ու Թափուր, միշտ կ'սպասէ անակնկալ բարերարի մը գլխաւոր այցելութեան: Մեծ կարօտութիւններու հանդէպ մեծ բարերարներ միշտ անպակաս եղած են իբրեւ նախախնամական գլխաւոր միջնորդ, եւ ամուրձ են անձկութիւնները: Այսպիսի բարերար մ'էին արտասահման բնակող Ժամհարեան եղբարք որք որոշանամ գործին սատարեցին, իրենց անուամբ բացուած 12 որբանոցներով: Ոչ նուազ գլխաւոր ուրիշ անձնաւորութիւն մը այս օրերս կամէութիւն յայտնեց է կարեւոր գումարով մը օժանդակելու կարօտեւոց

անտուկին, եւ անսպառ պէտքերու հանգէպ Պատրիարքարանի զգացած բնական անձկութիւնը քիչ շատ թեթեւցնելու: Երանի՜ թէ իրականութիւն գառնար այս խոստում, եւ Պատրիարքարանն իր նոր գործունէութեան հետ նոր միջոցներով կարենար հոգալ բոլոր կարօտելոց պէտքերը:

* * * Կրօն. Ժողովոյ օրակարգը, է՛ն ծանրաբեռնուածը, տակաւ ստուարանալու վրայ է: Առաջն. Տեղապահներու առաւել կամ պակաս անբանաւոր հրաժարականներ, եկեղեցական անկարգութիւններ, քահանայական կռիւներ, գաւառէ գաւառ առաջնորդ շորթելու ձեռնարկներ, կրօնափոխական դէպքեր, կտակային դատեր ու կնճիւններ ելն. ելն. եկած խճողուած են հէք օրակարգին մէջ, այնպէս որ կրօն. Ժողովն իր գործունէութիւնը տասնապատկելու պէտք պիտի ունենայ առոնց ամենուն ալ գոհացուցիչ լուծում ապրու համար:

Իր տեսակին մէջ նորութիւն մ'է գաւառի մը օրինաւոր առաջնորդը հափհափելու ձեռնարկը, զոր ըբած է Եգիպտոսի Գաւառ. Վարչութիւնը, Ռոտոսթոյի առաջնորդին անձին վրայ կատարելով առաջնորդական նոր ընտրութիւն մը: Իր նախորդ ընտրութեան ջուրը իյնալէն վերջ, այսքան ձախորդ ընտրութիւն մը չէր կրնար ընել: Ո՛ւրկէ ուր յղացեր է այս տարօրէն գաղափարը: Պատրիարքարանի քթին տակ, Ռոտոսթոյի առաջնորդին եւ Եգիպտոսի Գաւառ. Վարչութեան միջեւ աշխատալից բանակցութիւններ կատարուել են, եւ հոսկ ուրեմն Տ. Յովսէփ Եպս. Այվազեան գաղտնի հաւանութիւն տուեր է, չիղճալով իր աղքատիկ հօտը լքանել, եւ իբրեւ անձնդիր հովիւ յեգիպտոս վազել, մոռնալով թէ ինք Ռոտոսթոյի վիճակին վրայ եպիսկոպոս ձեռնադրուած եւ ուխտած էր առաջի Աս-

տուծոյ՝ չբաժնուիլ իր հօտէն, ցորչափ հօտը գոհ է իրմէ. բայց կ'երեւի թէ ինք գոհ չէ իր հօտէն, եւ կամ թէ աւելի շահաւոր եւ դիւրակեցիկ գտած է Եգիպտոսի առաջնորդութիւնը: Եգիպտոսի Հայերը սակայն Պատրիարքարանի օրէնքին ո՛ր տրամադրութենէն առած են ուրիշ գաւառի մը օրինաւոր առաջնորդը շորթելու իրաւունքը: Այդպիսի ձեռնարկ մը, եթէ քաջալերուի, անկարգապահութեան տեղի կրնայ տալ, վասն զի եկեղեցականք, այդ սկզբունքի վրայ յենլով, իրենց գործին ու շահուն յարմարած տեղը պիտի երթան, և չյարմարածէն պիտի հրաժարին: Յաւալի է որ մեր կղերը ցարդ չէ հասկցած թէ կարգապահութիւն ըսուածն եկեղեցական մեծ առաքինութիւն մ'է: Ո՛չ Յունաց Պատրիարքարանի եւ ո՛չ ալ Հայ Հռոմէականաց Պատրիարքարանի չղանակներուն մէջ երբեք այսօրինակ անկարգապահութիւն մը չի տեսնուիր: Ա՛խր մէջ է որ եկեղեցականք ուղածնուն պէս կը շարժին. կարծես թէ կրօնական բարձրագոյն իյնանութիւնն իր հեղինակութիւնը կորսնցուցած է անոնց վրայ: Ի սկզբանէ անտի, չափազանց ներողամտութեան արդիւնք է այս. վարձք ու պատիւ հաւասար ընթանալու են: Ազգ. Վարչութիւնը պէտք է բեկանէ Եգիպտոսի առաջնորդական ընտրութիւնը, մի կողմէ ազդարարելով Ռոտոսթոյի առաջնորդին որ չափաւորէ իր փառասիրութիւնը, եւ կարգապահութեան հնազանդի, եւ միւս կողմէ իբրեւ հաստատուն կանոն յայտարարելով թէ արդէն գաւառի մը օրինաւոր առաջնորդն եղող եկեղեցական մը չի կրնար ուրիշ գաւառի մը առաջնորդ ընտրուիլ: Եգիպտոսի առաջնորդութեան համար ալ տրամադրելի վարդապետներ ու եպիսկոպոսներ չեն պակսիր, փա՛ռք Աստուծոյ, եւ մանաւանդ որ շատեր անոր

համար հոգի կուտան, արժանիք ունենան թէ ոչ, գէթ բուրգերու երկիրը տեսած ըլլալու առիթը ձեռքէ չփախցնելու համար: Ահ, սրչափ աղէկ պիտի ըլլար եթէ սա ուսուցիչ մաստակարարող Գործակալութեան պէս, առաջնորդութեան մատակարարող գործակալութիւն մ'ալ ունենայինք, գէթ ասանկ յուսախաբութիւններու չէինք մատնուեր:

* * * Եթէ Ուսումն. Խորհուրդը մէկ քանի շտաբէ ի վեր հանգիստ կ'առնէ եւ իր օրակարգի խնդիրներն իսկ մոռացութեան տուած է, սակայն միւս կողմէ կանոնաւորապէս կը շարունակէ իր հաստատած կիրակնօրեայ մանկավարժական դաստիարակութիւնը: Առաջին օ-

րէն Լսարան անուամբ մկրտեցինք զայն, վասն զի անկէ տարբերութիւն մը չունէր բնաւ: Ունկնդիր ուսուցիչք եւ ուսուցչուհիք, իրենց եղած ազդարարութեանց հակառակ, ամենեւին փոյթ չեն տանիր խօսուածները ծանօթագրելու, կարծես թէ ամէն բան ուսած ու մարսած են արդէն: Ոմանք ալ աղուորիկ մը կը քնանան: Այս քունը փախցնելու, անտարբերութիւնը թօթափելու իբրեւ միջոց կ'առաջարկենք մերթ ընդ մերթ եւ վիճակաւ, հարցումներ ուղղել ունկնդիր-ուսանողներուն, հասկնալու համար թէ անոնք խօսուածներէն կ'օգտուին թէ ոչ:

Բ. Պ.



ԿՏԱԻՆ ՈՒ ՎՐՁԻՆԸ


ՀԱՅ հանճարներու Համաստեղութենէն նոր աստղ մ'ալ անհետացաւ: Ոչ եւ է մեծանուն, անգուգական ծովանկարիչը, Աղա Յովհաննէս Այվազովսկի, որ ցարդ իրեն հաւասարող չէ ունեցած ծովանկարչութեան արուեստին մէջ, գրեթէ բովանդակ երկրի վրայ: Իր համբաւը, յաւէտ նախանձելի, Եւրոպականէն շատ վե՛ր, տիեզերական դարձած էր: Իր հիացողները պարզ մահկանացուներ չէին, այլ աշխարհիս բոլոր մեծ հանճարները, բոլոր մեծ գեղասէրներն ու արուեստագէտները, բոլոր թագազուի վեհապետները: Ճշմարիտ աշակերտ ու սի-

րող բնութեան, իր կախարդիչ վրձինով գիւղէր անկենդան կտաւին վրայ պատկերել ինչ որ բնութիւնն ունի կեանքոտ, վեհաշուք ու հրաշափառ: Ծո՛վը, իր յաւիտենական միակ սիրուհին, չունէր երես մը, տեսիլ մը, երեւոյթ մը որ ծովանկարչին դիւթիչ վրձինին տակէն անցած ու անոր հպատակած չըլլար: Իր վրձինին արագաշարժութիւնն առասպելական էր. կը բաւէր իրեն քանի մը կաթիլ ներկ նետել եւ քանի մը գիծ ուրուագրել, եւ ահա հրաշալիք մը երևան կուգար դիւթիչ, հմայիչ: Իր զծած 4,000էն աւելի նկարներէն մէն մին բնութեան հրաշալի երեւոյթներուն գլուխ-գոր-

ծոցն էր, մեծ-վարպետին հանձարին հուրը ցողացնող, Որքան հիացող բնութեան սքանչելի տեսարաններուն, որոնց հաւատարիմ թարգմանն էր, այնքան մեծ պաշտող մ'էր բնութեան Աւարչին, իր հանձարին վրայ հիացողներուն կ'ըսէր ստէպ. «Եթէ Սասունած քիչ մը կարողութիւն տուած է ինձ, գիտցէք որ անդուլ աշխատութեամբ կրցեր եմ զարգացնել զայն»: Իր ցեղին աշխատասիրութեան ընդոծին ոգին ժառանգած, մեծ աշխատող մ'էր, մեծ հաւատացող մ'էր, վասն զի աշխատութիւն եւ հաւատք անբաժան են. կ'աշխատէր ու կը հաւատար թէ պիտի յաղթէր, ու կը յաղթէր դժուարութեան: Ո՛չ ապաքէն աշխատութիւնն է նոյն ինքն հանձարը, ինչպէս կը դաւանէր Վօլդէր: Հրապարակաւ կը դաւանէր թէ ինք, արդէն մեծ վարպետ, դեռ աշակերտ մ'էր բնութեան, վասն զի Աստուծոյ ստեղծած բաները այնքան շատ ու աննկարագրելի են, կ'ըսէր, որ եթէ 300 տարի ալ ապրիմ, միշտ նոր բան մը պիտի տեսնեմ նկարելու, . . . Իր արեւ փառքին վրայ չէր փքանար, իր թշնամիներուն ու նախանձոտներուն դէմ չէր վշտանար, իր միակ միւթարութիւնն էր իր կտաւը, իր վրձինը որոնց քով ամէն բան կը մոռնար, իր իսկ բառերով: Աչք ժողովրդեան՝ աչք Աստուծոյ, ահա իր բովանդակ դաւանութիւնը, ինք փառքի ետեւէն չէր վազեր, այլ փառքը կը հալածէր զինքը. կ'աշխատէր միշտ լաւ բան մը արտադրելու, առանց փոյթը

նելու թէ գնող պիտի գտնէ՞ր թէ ոչ: Իր հազարաւոր նկարներէն հազիւ 2—300 հատը յանձնարարութեամբ շինած էր, իսկ միւսները շինած էր իր աննման արուեստին համար, որու վրայ դարեր պիտի նախանձին: 83 տարիներու բեռին տակ, տակաւին կ'աշխատէր իր Թէոդոսիոյ (Նրիմ) մեհարանին մէջ, Սեւ Ծովուն եզերքը, ուր չիջաւ իր արեւը Մայիս 3ին, անլիր պարապ մը թողլով ծովանկարչութեան աննման արուեստին մէջ: Եւրոպական մամուլը համբուռն, մեծանուն նկարչին մահուան առթիւ, անգամ մ'ալ հռչակեց անոր աննսեմ փառքը, ինչպէս փառաւորած էր անոր հսկայ հանձարը, Եւրոպական ուղեւորութեանն առթիւ: Իր աշխատասիրութիւն, իր խոնարհ ոգին, իր աստուածաշատութիւնն նոյնքան իր մեծ փառքերը եղած են ու պիտի ըլլան միշտ որքան իր աննման նկարներն որք դարերու հոլովումէն փճանալու չեն սահմանուած, վասն զի անոնք միշտ զուրգուրոտ ձեռքերու մէջ պիտի գտնուին, թանգարաններու, պալատներու սրահներուն է՛ն գեղեցիկ զարդերը պիտի կազմեն, որոնց վրայ պիտի ցոլայ յաւէտ հայ հանձարին հուրը:

Կ'ողբանք այդ մեծ հայուն մահուան վըրայ, որ իր բովանդակ կեանքին մէջ կարծես աշխատեցաւ հաստատելու համար թէ Հայր թէեւ հանձարաւոր դաւակներ քիչ ունի, բայց իր ունեցած սակաւութիւններն ալ հսկաներ են:



ԽՂՃՄՏԱՆՔԻՆ ԴԻՄԱՑ

(Ն Ո Ր Ա Վ Է Պ)



ՄԻՌ աչքով մընայող չէր եղած ատ բարի մարդուկին, հարուստ թէ աղքատ, ու իր լռիկ բերեգործութիւնները երախտագիտութեան լայն տեղ մը շատո՛նց չինած էին թաղեցի թշուառներու սիրտին մէջ։ Փոխ անունով գումարներ կը գլորցնէր իրեն ներկայացող վիզերնին ծուռ մարդոց գրպանէն ներս, փոխարէն է՛ն պարզ բանը սպասելով դիմացինէն, — մարդու չիմացնել։ Այսպէս կարօտին ողորմիլը միակ երջանկութիւնն էր իրեն համար, տուածը չի պահանջելն ալ՝ անոր լրացուցիչ գերազոյն վայելքը։ Անանկ որ իր մենակեացի կեանքը խանին անկիւնէն երբ գերեզմաննոց քաշկրռեց՝ դիւրին եղաւ գործած աղէկութիւններուն թիւը ճշդել, նայելով այն ստուար ամբոխին որ առանց մահազդի վազեր եկեր էր յուղարկաւորութեանը, աշուրնին խոնաւ ու դէմքերնին տխուր։

Վերջին յարգանքը գոր ընել ուզեցին այս պարզ մարդիկը ննջեցեալին վարդապետ ու քահանայ գրպաննուն ծախսելով բերել տալու՝ մերժուեցաւ ինձմէ, յարգած ըլլալու համար մեռնողին կտակը, այն է խարիպ տէրտէրո՛վ մը միայն թաղուիլ։

Քառսուներ անցուկ մարդ մըն էր Անտօն աղա, ինծի պէս իրիկուրները սրճարան կուգար լրագիր կարդալու։ Հոն ճանչցայ զինքը, ու միշտ նոյն մարդը տեսայ, անխօս, անժպիտ, մէկո՛ւն չի նայող, ընկերութենէ խոյս տուող մարդը վերջապէս։ Եւ տարօրինա՛կ բան, իր թերթի ընթերցումը հինգ րոպէի գործ էր, էջերուն վրայ հարեւանցի ակնարկ մը կը պտըտցունէր ուս-

կից յետոյ կը թողուր որ թերթը ինար մատներէն։ Ան ատեն ծխատուփը կը հանէր, հանդարտ մը կը վառէր սիկառը գրպանի կայծքարովը եւ ոռնգերէն յորդող մուխերուն մէջ զլուխը կորսուած՝ դէմքը մտաւայ անձի մը այն տառապագին երեւոյթը կ'առնէր որ կարծես դեռ երե՛կ կրած ըլլար փլցնող վիշտ մը։

Անգործ բայց հարուստ, ատ տարիքին մէջ ամուրի, ծեր՝ ժամանակէն շա՛տ կանուխ, մինակ ուրիշին երջանկութիւնը չինելու համար իր սակաւապէտի ապրանքէն դուրս քանիպատիկը էվէլ մսխող այս մարդը ծայր աստիճան սրած էր հետաքրքրութիւնս։ Բարեւ ասծուբարիներ երբ մէյ մը սկսայ՝ ջանացի օր օրի մտերմութիւնս տաքցունել հետը, նպատակիս հասնելու յոյսով։ Չեղաւ որ լսէի իրմէ հեռուէն հեռու անանկ խոստովանութիւն մը ուսկից կարելի ըլլար կռահել իր անցեալը, թուղթին վրայ ասեղի հարուած ծակէ մը դիտուելիք պատկերին պէս։

Ես, կեանքը նո՛ր ապրիլ սկսող տղայ, չը գիտեմ ի՛նչ ազդակներու տակ չէի ուզեր լքել զինքը, ու ճշմարիտ հակասութեան մը պէս կը քաշէի պատանեկութիւնս այս աշխրհէն քաշուած, ինքզինքէն գանած անձին քով, գարուն իրիկուններուն մէկտեղ քաշելով աղւոր ու ամայի դաշտերուն մէջ։ Այդ պտոյտներու պահուն, չորս կողմիս լոյսէն, փթիթէն ու խտիղէն նայուածքս գինովցած՝ անուշ ծրագիր մը կը ծնէի յանկարծ ապառնի կեանքիս համար, տարփանքի հեշտ խղիւղութիւն կը վրդովէր մէկէն սիրտիս ամայութիւնը, ու չէի քաշուեր պարզելու անոր հոգիիս այդ վիճակները հազաք խանդոտ բառերով։ Ան կ'օրէէր գլուխը անանկ հեգնոտ կերպով մը որուն մէջ հմայքս կ'եղծուէր իսկոյն, ու կ'ըսէր ինծի, «նայէ՛ որ բարիք ընես, տղաս, ասիկայ այն ճամբան է որ քեզի Աստուծոյ պիտի տանի»։ Բռօթ մըն է, ի՞նչ, կը խորհէի,

Օր մը հիւընդցաւ, ու գէ'չ տեսակէն, Անխուսափելի էր այս բանը, քանի որ միշտ տխուր, միշտ մաղձոտ երեւոյթ մը ունէր արդէն ու կարծես իր շո'ւքն էր ապրողը: Հիւանդտես իր խուցը ամէն երթալուս՝ բացարձակապէս կ'արգիլէր ինծի ամէն դարման:

— Տկարութիւնս, ըսաւ հուսկ օրը մարած ձայնով մը, ցուրտ առնելու, գլխու ցաւի հիւանդութիւններու չինմանիր, շատ քիչ են կեանքիս ժամերը, աղէ'կ գիտեմ ես ասիկայ, ուստի ատենը հասած սեպէ' կեանքս իմանալու մարմաջդ գոհացնելու:

Իր մահուընէն տարիներ անցնելէ յետոյ կրնամ ալ առանց խղճահարութեան պատմել ինչ որ ինծի խոստովանեցաւ ան իր վերջին վայրկեաններուն, խօսած ատենը ամէն պարբերութեան մէջտեղը հազալէն, կուրծքը խժալէն, դէմքը պոստելէն ու երբեմն ալ պատմութեանը տենդոտ հանդոյցներուն՝ վերմակին լաթը ճմրթկելէն:

Առաջին անգամ ըլլալով հոգեվարքի մը ակամայ հսկող, ու տղայութիւնը դեռ վրաս ըլլալուն՝ նախապաշարումներու է'ն անգութին, «հոգեդարձ»ին հաւտացող, գամուած մնացած էի քովի աթոռին վրայ, արիւնս սառած՝ երակներուս մէջ ու աչքերս պի'չ իրեն սեւեռած, երբ սկսաւ խօսիլ:

... Ինչ որ անցեալինն է ալ՝ տեսակ մը տխուր հաճոյքով է որ դուրս կը հանենք զայն մեր շրթունքէն. յիշատակը աւելի լաւ կ'ըլլար որ քնանար մեր հոգիին մոխիրներուն տակ ու դամբանին մութի'ն ալ մէջ:

«Հօրս մօրս մէկ հատիկն էի, զիրենք, մե'ղք, շատ պզտիկուց կորուսած և ապաւինած հարուստ մօրեղբօր մը շուքին տակ: Լիսէն կէսէն թողուցի, երբ քու տարիքդ էի, և ասպարէզ նետուեցայ. տարիէ մը գործակատարը եղայ մետաքսի վաճառական Լ***իտիսի: Հիմակուան թափթփած վիճակէս դատելով պիտի ապշիս մնաս՝ երբ ըսեմ թէ Անտօն աղան Մօսկէօ Անթուան կը յիշուէր ատենօք եւ թէ չիքութեան մօտէլ մը կրնայի սեպուիլ Բերայի փողոցներուն մէջ: Փողկապս, ցպիկս, գլխարկս, ասոնց ամէնքը փոխնորդի պէս շաբաթը մէյ մը

նորուելու էին եւ ածելին երեք անգամ համարելու էր երեսներս: Սիրային շահատակութիւններս ըսես՝ հաշիւի չէին գար: Ուրիշ ի՞նչ կերպ կ'անցունէ Բերացի ամուրի մը որ արբունքի տարիքը թեւակոխած է ալ եւ ազատած պաշտպանի մը կապանքէն, և որուն վաստակը ի'րն է միայն, այսինքն հաճոյքներու ուրուն չորուն մսխումին: Մի' հարցունք ալ թէ քանի' աղջիկներ բուզիմս կ'ըլլային ծանօթի մը հանդիպելուս ու ի'նչ դիւրութիւններ ունէի չի' մը եւս: Բռնով համարյոք մը գնելու, պատանութեանս ատ խենդ օրերուն ուր արիւնը զգացումներուս կրակովը կը խժար:

«Օր մը բաթրօնս կ'առաջարկէր ինծի Պրուսա ճամբորդելու՝ խողակի վրայ ձեռնարկելիք գործի մը պայմանները կնքելու համար: Ամառ էր, զբօսաշրջիկի պէս հագուեցայ թեթեւ արդուզարդով մը ու մտայ չոգենալ:

«Պրուսա հասնելուս Սէթպաշիի պանդուկը տեղաւորուելէս յետոյ գացի գտայ Արութ աղան որուն հետ ձեռնամուխ պիտի ըլլայինք գործի: Ասանկ անուշ, հիւրասէր մարդ չի կրնար ըլլալ. ի՞նչ կը նեղանար որ տեղը չիկար բնաւ պանդուկ մնալուս: Իրիկուն էր, մարդուն հրամանին վրայ օդիի ափսէն չիտկուած բերուեցաւ:

«Ճմարիտ չլացք մըն էր զոր ինծի առթեց իսկոյն ատ կնոջ կերպարանքը՝ ափսէն աթոռին վրայ դրած պահուն, իմիններուս դարձունելով իր սեւ ու տխուր աչքերը, «բարի եկաք»ի անբարբառ գլխու հակումով մը: Ես ա'յսչափ անթերի, այսչափ անգո'ւթ կերպով գեղեցիկ կնկան քիչ անգամ չէ, երբե'ք չէի պատահեր: Շալ Կօրիւնեի րօպան որ անձնիքին կորադարձ նրբութիւններէն մինչեւ ցայտուն փարթամութիւնները վերէն վար կը կաղապարէր, ածուխի գոյն մազերը՝ ենթագանկին վրայ գալար գալար դիզուն, ճե'փ ճերմակ մորթը ու սե'փ սեւ աչքընքուն՝ օդիի առաջին գաւաթիս իսկ զիս գինովցուցեր էին: Ու երբ խօսակցութեան միջոցին Արութ աղան անոր իր այրի քոյրը ըլլալը կը զրուցէր ինծի, խորունկ շունչ մը առի իսկոյն, հիացումիս մէջ մեղանշումս այսպէս լուացուելով:

յիշեց Վահէ, տոմսակը՝ որ իրեն կ'արգիլէր այստեղուանքը գալ... Այս իր ըրածը ուրեմն հրէշութիւն մըն էր պարզապէս, հրէշութիւն մը...

Տակն ու վրայ եղաւ այս մտածումով. վախճաւ, սկսաւ դողալ. հիմա ալ զինքը հոսկէ վռնտելու համար չէ՞ր որ Ֆիմի պատուհանը ելած էր։ Ու լոյսէն սարսափած, ետ քաշուեցաւ, գնաց պահուելու ստուերներուն մէջ ու նայուածքը նորէն հոն դարձուց։

Պատուհանը ամայացած էր։

Ան ատեն Վահէ աւելի հաստատուեցաւ իր համոզումին մէջ. զինքը վռնտելու համար հող երեւցած՝ ու նպատակին հասնելով հեռացած էր ալ։

Եթէ գիտնար սակայն Վահէ Ֆիմիին այդ վայրկեանի վիճակը, թէ ինչ հզօրագոյն մագնիսականութիւն մը զինքը արթնցուցած էր իր հիւանդի քունէն ու պատուհանին առաջըը նետած, եթէ գիտնար թէ զինքը կանչել կը պապակէր այդ պահուն եւ ոչ թէ վանել կ'ուզէր, թէ հոնկէ հեռացած չէր այնուհետեւ, այլ հոն մարած ինկած, եթէ գիտնար, այո՛, գիտնա՛ր թէ... բայց ո՛ր մէկը թուել...

Լոյսը ճեղքուիլ էր սկսած երբ տուն հասաւ. գինովի պէս էր եղած։

Այս վրդով վիճակին մէջ գլուխը արանին մէկ անկիւնը տեսաւ նետուած, փոշոտած Վերքերը զոր գնած թէւ տարի մը առաջ, բայց տակաւին ախորժակ չէր ունեցած կարդալու։

Յարգալիր՝ ձեռքը առաւ ու սկսաւ կարդալ ուշադիր, մոռցած ամէն բան, մոռցած արտաքին աշխարհը ու խուլցած այն մանչիւնին դէմ որ վայրկեանաբար խոթուցած բնութիւնը սկսած էր հանել այն պայքարովը զոր իր արձակած քամիները սկսած էին մղել հիւանդ, վատոյժ աշնան դէմ։

Այդ գիրքին մէջ միայն կ'ապրէր ինք։

Ժամերով կ'արդաց։

Ներկայ եղանք մենք, այս գլուխին սկիզբը, այն վայրկեանին երբ աւարտեց ան Վէրթերը, ու իրեն հետ հիմա ապրեցանք այն վայրկեանները, ժամերը, օրերը զորս ինք անցուցած էր տարիուկէսէ ի վեր եւ որոնց մէջ վերապրեցաւ քանի մը վայրկեաններ։

Վահէ ոտքի կ'ելնէ յանկարծ գինովի մը տարտամ նայուածքովը շուրջը կը նայի եւ մոլորաքայլ դէպի պատուհանը կ'ուղղուի. մէկդի կ'ընէ շերտաշերտ ու վայրկեան մը դուրս կը նայի. Հովը կը փչէ անդադար ու հեղօրէն. ծառերուն ճիւղերը կատաղօրէն կը գալարուին, կը շառաչեն, կը հեծեծեն. Սեւ, խիտ ամպեր խափանած են պաշտելի կապոյտը երկինքին, տխրատեսիլ ամպեր որ ձմրան կողէն փրթող հիւսիսային քամիէն կը քշուին, կը տարուին խօլական արագութեամբ մը, կարծես այդ մահախաբուս շունչէն սարսափահար։

Երէկ կապոյտ երկինք մը, խաղաղ բնութիւն մը, լուսընկայ մը գեղահրաշ, ժպտուն, յուսատու հորիզոն մը, այսօր թախծոտ, մռայլամած երկինք մը, հորիզոն մը սգապատ, հո՛վ, տրտմութիւն, քայքայում...

Սասնկ չեղա՛ւ մի իր կեանքն ալ։ Ինքն ալ չխաբուեցա՛ւ երէկուան օդին պէս. երէկուան օդը չէ՞ր նմաներ մեռնելու շատ մօտ հիւանդի մը կրած այն պատիր աղէկիդարձին զոր գիտէ նուիրել մահը կեանքի վերջին կամքին հանդէպ։ Ինքն ալ, ոգեվար մը, չը կրե՛ց այս նոյն պատրող աղէկի դարձը։

Աւա՛ղ աշունէն ետքը գարունը չէ՛ որ կուգայ, ու մարդուն հագեկան կեանքը մէկ գարուն միայն ունի։

Յուսահատ լքումով մը կը թողու Վահէ վարագոյրը եւ դաշնակին քովը կ'երթայ տատամտութեամբ քալուածքով։

ՀԱՆՐԱՊԵՏԱՆ

Դաշնակին վրայ նուագատետրերու խառն ի խառն նետ-
ուած գէղ մը կայ : Մեծ մասը ձեռագիր՝ իր հեղինակու-
թիւններն են որոցմէ ոչ մէկը չէ կրցած հրատարակել : Ա-
տոնց մէջէն աչքին կը զարնէ Սօցար մը՝ «ԻՏԷԱԼ» խորա-
գրուած : Զեռքը կ'առնէ. երկարօրէն վրան կը նայի , կը
թղթատէ յետոյ հեգնութեան սառ ծիծաղ մը դեղնած այ-
տերուն վրայ եւ կ'սկսի յանկարծ փսփոսի քնել «Իտէ-
ա՛լ...» մրմնջելով վրիժառուի մը խուլ ձայնովը , «Իտէա՛լ ,
անիմա՛ստ բառ , իտէա՛լ երազել , ապշութիւն պարզապէս :

Միեւնոյն բանը կ'ընէ այնուհետեւ իր բոլոր գործերուն
հաշուոյն ալ . «Կորսուէ՛... դո՛ւն ալ , դու՛ն ալ կորսուէ...
կորսուեցէ՛ք խաբեբաներ...» գոչելով ձայնով մը որ զըս-
պուած մունչիւնի մը տպաւորութիւնը կուտայ :

Ասդին , գրադարանին վրայ ուրիշ մըն ալ կայ , ան-
ջատ տեղ մը դրուած . ձեռքը կ'առնէ ան ալ ու պատուելու
կը պատրաստուի : Զի՛ կրնար . երկաթ ձեռք մը պինդ կը
զարնէ կարծես իր ձեռքերուն : Զեռքերէն վար կ'իյնայ : Իր
կեանքին գերագոյն ժամերուն մէջ գրած գործն է այդ .
սօնաթիւ «Ֆիմի՛...»ն , իր գլուխ-գործոցը :

Նորէն ձեռքը կ'առնէ գուրգուրանքով . առաջին նօթերը
կ'երգէ մտովի . վերյուշումներու վոհմակ մը կը խժան գան-
կին մէջ...

Զոր հեկեկանք մը յանկարծ կը թօթուէ զինքը :

Դաշնակը կը բանայ տրտմօրէն : Քանի՛ ամիս կար որ
գոց կը մնար :

Կ'սկսի ցաւոտ տենդով մը նուագել այդ իրապէս ներշնչ-
չումի ծնունդ եղանակը :

Դաշնակին ձայնը անուշցած էր կարծես :

Ու վահէ , կը նուագէ , կը նուագէ... : Անոր մէջ եր-
ջանկութեան ափսոսանքը նախազգացուած է . տառապանքի
հրեշտակայնութիւնը կայ հոն , կեանքի սէրը ու ցաւը , սիրոյ
սրբութիւնը... :

մին էր , իր մօտը , նիհար , տփառ , տառապագին , մազե-
րը թափած , երեսին վրայ :

Աւելի մօտիկցաւ ան . քովը եկաւ . ձեռքերը երկարեց ,
բռնեց իր ձեռքերը ու կարեւելէր նայուածք մը սուզելով աչ-
քերուն մէջ՝ «Խեղճ վահէ...» հառաչեց ու անհետացաւ :

Վահէ աչքերը բացաւ սրսփալով . իր պատուհանին ա-
ռաջքն էր . դեռ կը կարծէր իմանալ այդ հառաչ-ձայնը ար-
ձագանգի մը պէս...

Դուրսը լուսընկան իր է՛ն պայծառ լոյսովը հուրիացած
կը ցոլար մաքուր երկինքին անհունութեանը մէջ :

— Տէ՛ր Աստուած , Տէ՛ր Աստուած , մրմնջեց , երա՛զ է ե-
ղեր... Ի՞նչ յանդգնութիւն ասանկ երազ մը տեսնալ... աս
ի՛նչ ազուրկ երազ էր...

Ժամը ութ ու կէս զարկաւ :

Տեղէն ելաւ Վահէ յանկարծ խենդի պէս . դուռը բա-
ցաւ ու դուրս ինկաւ գիշերուան այս ժամուն... գրեթէ վա-
զելով հասաւ անտառը ու նայուածքը տնկեց վիլլաին...

Վիլլան կը նիւհէր :

— Երազին իմաստ տա՛լ , անկէ բան մը յուսալ... արդ-
եօք յիմարացե՞ր եմ...

Գրեթէ նոյն վայրկեանին սակայն նշմարեց լուսընկային
յստակ լոյսովը լուսաւորուած պատուհանին բացուիլը ուր
տեսաւ նկարուիլը կնոջ կերպարանքի մը... : Իր երազը ի-
րականութիւն էր կարծած , բայց երբէք իրականութիւն
այսքան երազային չի պիտի ըլլար . ապշած մնաց . Ֆիմին
էր ան լուսընկայէն աւելի տփառ , մելամաղձիկ , մազերը
ցիրուցան... , Որքա՞ն կը նմանէր իր երազին Ֆիմիին... :
Կարծես ան իսկ էր...

Ֆիմիին հետ իր պատուհանէն տեսանք մենք Վահէն
այսպէս արձանացած վիլլաին նայելու վիճակին մէջ :

Այս անընային վայրկեանին սակայն յանկարծ տոմսակը

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

Ուրիշ ատեն ինչե՛ր պիտի զգար, ի՞նչ խռովքներ պիտի ունենար Վահէ աշնան այս երազկոտ, հիւանդ բանաստեղծականութեան հանդէպ:

Բան մը չէր զգար հիմա, յուզում մը չէր ունենար, ոչ իսկ երկար շունչ մը առնելու պէտքը:

Մայրը վարէն գինքը կանչեց այն պահուն. քիչ մը ուտելիք պատրաստած էր:

Ուտելու ախորժակ չունէր:

Հոն՝ պատուհանին առջեւ մնաց թմրած՝ խորհելու երեւոյթով մը:

Քանի մը ժամեր անցան այսպէս:

Այս զմայլելի բնութիւնը սակայն վերջապէս յաջողեցաւ իր երականերուն մէջ քիչ մը կենսականութիւն մտցունել:

Ոտքի ելաւ յանկարծ: Պէտք ունէր արդէն հաւատալու թէ կ'ապրէր: Ու կարօտ մը իր էութեանը մէջ ծաւալեցաւ, կարօտ մը իր անցեալ յուզումներուն գէթ ստուերը տեսնալու այս վիպական գիշերին մէջէն: Իր այդ անցած թըշուառութիւններուն զգայութիւնը կրելը, անով տառապելը իսկ վայելք մը պիտի ըլլար հիմա իրեն համար:

Տունէն դուրս ելաւ. անցաւ այդ ճամբաներէն հանդարտութեամբ. հասաւ անտառը. ծառերը ա՛լ վտիտ, անկենդան տերեւներ ունէին ու գետինը թափած չորցած տերեւները կը խշրտային ոտքերուն տակ: Սկսաւ վիլլաին նայիլ:

Անէ՛ծք, կտո՛ր մը, կտո՛ր մը իսկ չէր յուզուեր:

Վիպագիրին վրայ ցուրտ ազդեցութիւն մը պիտի ընէ իր վէպին այն անցքերը որոնք, գրած ատեն, է՛ն մեծ յուզումները պատճառած էին իրեն՝ երբ օր մը իր գործը դատաւիտուի արարածէ մը նոյն իսկ որ անկէ տող մը գաղափար փսկհասկնալու կարող չի պիտի ըլլար:

Յանկարծ տերեւներու սօսափիւնի մը շշուկը հասաւ ափանջին. Վահէ նայեցաւ սրտադողով... Ո՛վ երկինք, փե-

Մայրիկը որ ներսի սենեակը նստած Վահէին պատուտած գուլպաները կը կարկտէր այս պահուն, յանկարծ ոգեւորուած կ'ելլայ տեղէն ու դռան ետեւը կայնած մտիկ կ'ընէ. ու երբ Վահէ ալ կը դադրի զարնելէ, սենեակէն ներս կը մտնայ:

— Մատնե՛րդ սիրեմ, զաւակս, մատներդ սիրեմ... —

Վահէ կը նայի մայրիկին որուն աչքերուն եզերքները կը փայլին դեռ արցունքի երկու կաթիլ...:

Գլուխը ասդին կը դարձունէ նորէն վախնալով որ լալը չկրնայ բռնել, կ'ելլայ դաշնակին քովէն յետոյ եւ գրադարանին առջեւ կ'երթայ: Վէրթէրը դեռ հոն է վերջին էջին վրայ բացուած: Կ'իշայ հոն իրեն մտերիմ հինցած թիկնաթուին մէջը. գրիչը ձեռքը կ'առնէ եւ ի լուր դեռ անհատնում արձագանգին, որով այդ ցաւոտ եղանակը կը ծփանաւոր սենեակին մթնոլորտին մէջ, խառնուելով հովին որ աշնան մահանուագը կ'երգէ, Վահէ կ'սկսի գրել իր օրագիրը:

«189... Նոյ... Կիրակի».

«Խամրած՝ երաժշտութեան համար ունեցած սէրս ու պաշտամունքս, հատած՝ տաղանդս, փշրուած՝ ինծի սիրելի եղող երեւոյթները, կեանք տուող ոյժերը, կ'զգամ ահա թէ ա՛լ մարդ չե՛մ».

«Վաղը բաքոսն մը պիտի ունենամ դէմն որ պիտի հրամայէ, պիտի պողայ կանչէ, պիտի ջախէ».

«Ուրեմն է՛ն հասարակ արարածի՛ն պէս ա՛լ պիտի ապրիմ վաղուընէ, է՛ն ռամիկ մարդոց հետ պիտի խօսիմ».

«Չէ՛, չէ՛, այդ անիմաստ, գարշելի՛ կեանքին մէջ չը մտած դեռ, պիտի ջնջե՛մ իմ...».

Վահէի գրիչը առաջ չերթար, ինքզինքը բաւական արի չ'զգար գրելու...

Քիչ մը առաջ սակայն Վէրթէրի վերջին էջը կարդացած պահուն մտածած էր է՛ն մեծ համոզումովը թէ մարդիկ իրենց հոգիին բուն պէտքերը, հակումները տեսնալու սահմանուած աչքեր ունենալէ զրկուած են շատ անգամ, թէ Վերթէրը մին էր եւ թերեւս ամէնէն կատարեալը այն մատեաններէն որոնք պիտի գիտնային դնել ուղեղին մէջ՝ այդ պէքը դէպի հոգին :

Այս մտածումին ազդեցութեան տակ Վահէ հիանալ էր սկսած ճակատագրին խորհրդաւոր կողմերուն վրայ . սահմանուած էր որ այսօր կարդար այդ գիրքը , այսօր միայն պիտի կրնար անոր մինչեւ խորքը ընկղմիլ ու ըմպել անոր գերանուրբ խորհուրդը :

Հիմա սակայն կ'զգար թէ տկարացած էր Վէրթէրին այդ վայրկեանի ներարկած ու տիրապետական թուող թելադրութիւնը :

— Չէ՛, չեմ կրնար , չի պիտի կրնամ ընել այդ բանը . . .

Ու տենդով մը աւրելով այդ տողը , կը շարունակէ գրել եռանդաղին .

«Բայց ի՞նչ ապիկարութիւն է աս . աս ի՞նչ վատութիւն է . ինչո՞ւ երբ ալ նպատակ մը չունիմ այս կեանքին մէջ , դեռ չունենամ ինքզինքս ջնջելու ոյժը . ի՞նչ տխմար նախապաշարում է այս որ բոյն դրած մարդուն ուղեղին մէջ , երակներուն , ամբողջ էութեանը մէջ , ասա՛նկ ժամու մը մէջ իսկ տակաւի՛ն կեանքէն բաժնուելու չափ չը կրնար անոր արհամարհել տալ զայն . . . »

Ներսի սենեակէն եկող հառաչի մը ցաւոտ չեչուը կը ցնցէ այս պահուն Վահէն :

Մայրիկն է :

Գրիչը կը թողու ընդոստ , ոտքի կ'ելլայ ոստումով մը ու ըռպէական ազդեցութեան տակ այն գաղափարին որ այդ հառաչը կը ծնի իր մէջը՝ Վահէ կ'ուզէ ներս վազել , մայրի-

— Այսօր չաբաթ է , ըսաւ , երբ ալ վաճառատունէն դուրս կ'ելլային , այսօր կամ վաղը մազերդ կտրել տուր , ամօթ է ադ մազերով շուկայ երթալը . երկուշաբթի առտու ալ կանուխ գործիդ . հա՛, քեզ նայիմ . . .

Ու մէկը երախտապարտ ձգողի մը հայրական ու յաղթական կերպարանքով ձեռքը երկարեց զոր Վահէ բռնեց ուժասպառ .

— Շնորհակալ եմ . . .

Նման երախային որ սովատանջ մօրը հէգ ցամքած ստինքներէն կախուած կուլայ , կը ճչէ , կը ճանկատէ զանոնք եւ ուժասպառ կը յանձնուի վերջապէս այն թմբիրին որ մահուան պիտի փոխանցէ զինքը , Վահէ տուն գնաց ու ինկաւ բազմոցին վրայ , պատուհանին առաջը , լլկուած , խորտակուած , սմքած :

Գիշեր մը ու օր մը կը մնային ալիբեն . ա՛լ գործի պիտի ըլլար , շուկայի , առուտուրի մեքենայ-մարդը պիտի ըլլար . ա՛լ պիտի ջնջուէր վերջին բեկորն ալ իր վշտակոծ եսին :

Թէեւ աշնանավերջ , օդը քաղջ ու մեղմ էր եւ իրիկունը գեղեցիկ : Շունչ մը չէր ելլար :

Գլուխը դէպի ետեւ պատին ձգած , ու աչքերը պատուհանէն դուրս՝ կ'զգար աւելի քան կը տեսնար մութը որ կը ծաւալէր ու գիշերը որ կը յառաջանար :

Ամպ մը չի կար . դէպի արեւելք երկինքը դեռ մանիչակ սարսուռներով կը դողդղար ու արեւմուտքի հորիզոնը իր նուաղկոտ մթնշաղը կը կաթկթէր , խարխափուած՝ արեւին յապաղեալ տոնյն ճառագայթներուն մարմրուն ցոլքերովը :

Լիալուսինը սկսաւ ծայր տալ այս պահուն՝ իր տերեւներէն կիսովին մերկացած ծառի մը արձանացած ճիւղերուն մէջէն՝ ցաւելու համար կարծես ոգեվար բնութեան այս տոճոյն , խաբուսիկ պատրանքը :

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

«Թրքախօս էին երկուքն ալ, բայց մին-
չեւ հիմայ իմին լսած տաճկերէնս չէր իրենց
լեզուն, մէջը շաքար խառնած կը խօսէին
կարծես, ու վայելքի պէս բան մը կ'զգայի
Միւնէվէր հանրմին — այս էր անունը —
հվվէք, կիլիլւմ ու լաբին բառերուն արտա-
սանութենէն մանաւանդ՝ որոնցմով կ'սկսէր
կամ կը վերջացներ յաճախ իր խօսքը:
Հոն ճաշեցի ու ճաշէն յետոյ բաւական
նստանք՝ կիրակիին համար դաշտային աղ-
ւոր ժամանց մը սարքելով: Եթէ անոր
հետ մեռելի անգամ երթալ հարկ ըլլար՝ նո-
րէն գերազանցապէս երջանիկ անձը պիտի
զգայի ինքզինքս: Գիշերքարին զոր լամբան
ձեռքը մինչև դուռը ընկերացող այդ հուրիին
կը փարտայի հիմա միւս ձեռքը ափիս մէջդող-
դողուն՝ կը խղզէր պաշտումիս հառաչը կո-
կորդիս մէջ: Չեմ գիտեր ի՞նչպէս, ե՞րբ
պանդուկ եկայ, միայն կը յիշեմ ատ լուսըն-
կայ լուս գիշերուան մէջ անցուցած երա-
զանքի ժամերս, պանդուկիս բաց պատու-
հանին առջեւ միս մինակ նստած, սիկառիս
ծուխերուն մէջէն երեւակայելով տեսնել
այդ եթերային էակը որ քանի մը, քանի՛ մը
ժամուան մէջ դիւթեր, հրդեհէ՛ր էր զիս:

Վարէն, ընդարձակ պարտէզին թա-
ւուտներէն հովը ունգերուս կը բերէր հա-
սուն դեղձերուն զգլխիչ հոտը, ու հեռուն,
Ողիմպոսի ձիւնոտ արտեւանին վրայ լուսի-
նը կը ցոլցըլար նազանքով: Միւնէվէրի՝ հո-
գիիս մէջ տիրապետող անսահման հմայքին
քով կը մարէին, կը տոգունէի՛ն այսպէս բոլոր
այն էգ գեղեցկութիւնները զոր Բերայի մէջ
ճանչցած էի... Աստուծոյ չէի ուզեր աչքերս
բանալ, սաստիկ կ'անձրեւէր ու փոթորիկ
կար, լալս միայն պակաս էր: Ու երբ պա-
տուհանին առաջը գալով օդին պայծառու-
թիւնը եւ արեւին ճաճանչիլը տեսայ՝ տղու
պէս սկսայ խայտալ: Անձրեւ կարծածս աղ-
մուկն էր այն հեղեղին որ ամառ ձմեռ
կ'անցնի եղբր պանդուկիս առաջքէն, և փո-
թորիկը՝ այն ձայնը որ կ'առթուէր փայտէ
կամրջակին վրայէն անցնող կառքերէն...
Չնչին, անգութ աղմուկներ որ մազ մնացեր
էին լըրճել այդ օրուան ըղձացուած անուշ
երջանկութիւնս:

[Երուսաղէմի] ԹԷՌԵՐԻԷ ԼԱՊՈՒՆՆԱՆ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

“ՀԱՆՐԱԳԻՏԱԿ”, Ի

ԴԱՍԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Իմաստասիրութիւնը՝ իբրեւ աննիւթա-
կան էից ու էակաց գիտութիւն՝ սապէս կը
բաժնուի. Հոգեբանութիւն, Տրամաբանու-
թիւն, Բարոյագիտութիւն ու Աստուածգիտու-
թիւն (theodicee) որոնց վրայ կրնանք ա-
ւելցնել Ճաշակագիտութիւնը կամ Գեղագի-
տութիւնը (esthétique), այսինքն գեղեցկին
ուսումը: Ոմանք ալ սա կարգով կը բաժ-
նեն. Տրամաբանութիւն, Բնագանցութիւն
եւ Բարոյական: Բնագանցութիւնն ալ իր
մէջ կը բաժնեն Ընդհանուր Բնագանցու-
թեան կամ Էաբանութեան (Ontologie), այ-
սինքն էին ու էակին եւ անոր ստորոգել-
եաց կամ յատկութեանց գիտութեան, եւ
Մասնաւոր Բնագանցութեան կամ ոգեբանու-
թեան (Pneumatologie) որ իր մէջ կը պա-
րունակէ Հոգեբանութիւնը եւ Աստուածգի-
տութիւնը:

Դպրոցներու մէջ, իբրեւ դասախօսելի
ուսում, նախ կ'աւանդեն Հոգեբանութիւնը
կամ Հոգւոյն կարողութեանց ուսումը, ա-
ռաջ քան Տրամաբանութիւնն ու Բարոյա-
գիտութիւնն, որք անոր կիրառութիւններն
ու ընդարձակումներն են. նոյնպէս ալ
Աստուածգիտութենէն առաջ՝ որ կը սովորե-
ցընէ Աստուծոյ գոյութեան եւ անոր ստո-
րոգելեաց գլխաւոր ապացոյցները, Արար-
չին ամենէն աւելի գեղեցիկ ու գլուխ-գոր-
ծոցն եղող մարդուն ծանօթութիւններէն
քաղելով զանոնք:

Նկատելով փիլիսոփայութիւնը թէ՛ իբ-
րեւ տիեզերական գիտութիւն եւ թէ՛ իբ-
րեւ մասնաւոր գիտութիւն, անոր ուսումը
դիւրացնելու համար գործածելի կերպերուն
կամ մէթոդին նկատմամբ շատ մը վիճաբա-
նութիւններ, հակաճառութիւններ եղած
են. երբեմն ենթադրութիւնը, երբեմն իմաս-
տասիրական ձեռնարկութիւնը (syllogisme),
երբեմն ալ կոյրզկուրայն հեղինակութիւնը
առաջ քշուած, ընդունուած, գործածուած
է իբրեւ իմաստասիրական մէթոդ: Այժմ,

գէթ մեզ ծանօթ Ֆրանսայի եւ կարգ մը նման երկիրներու մէջ՝ աննութեական էակաց գիտութիւնը՝ որ Փիլիսոփայութիւն մասնաւոր անունով ծանօթ է, կ'աւանդուի կամ կը դասախօսուի ճիշտ միեւնոյն եղանակներով, ինչպէս դրական գիտութիւնները՝ դիտողութեամբ ու բանավարութեամբ, կ'ուսուցուն նախ, Հոգեբանութեան մէջ, դիտողութեան օգնութեամբ, հոգւոյն երեւոյթները, հանգամանքները որք կ'օգնեն դիւրացնելու անոնց բարւոք ու կանոնաւոր դասաւորումը. կ'աւանդուին հոգեկան կարողութիւնները որ հոգեկան երեւոյթներն առաջ կը բերեն, և այս կարողութեանց օրէնքները. յետոյ Բանավարութիւնը կը գործածեն, կը մարզեն Տրամաբանութեան մէջ, Բարոյագիտութեան մէջ, և Աստուածգիտութեան մէջ, ստացուած, ձեռք բերուած իրողութիւններէն քաղելով վեր հանելու համար բոլոր այն հետեւանքներն որք անոնցմէ կը բղխին:

Փիլիսոփայութիւնը՝ որ ճանչնալու, գիտնալու եւ լաւագոյն ու խորագոյն իմն հասկնալու պէտքէն ծնած է, մարդկային մշտքին չափ հին է. կը գտնենք զայն Արեւելքի մէջ, մանաւանդ Հնդկաց քով, ամէնէն հին ժամանակներու մէջ: Մշակուեցաւ ան հին Յունաստանի մէջ, սկսեալ Զ. դարէն, Բրիտտոսէ առաջ, և անկէ վերջ մինչեւ Զ. դարը, շնորհիւ ու ձեռամբ այն ականաւոր հանճարներուն որք կը կոչուին Թաղէս, Պիթագոր, Բսենոփոն, Սոկրատ, Պլատոն, Արիստոտէլ, Եպիկուր, Զենոն, Պրոտին, Պրոգլոս և ինչպէս և հոն կարգ մը աղանդներ կամ դպրոցներ, որոց իւրաքանչիւրն իր հասկցած կերպով կամ մէթոտով կը լուծէր գիտութեան մեծամեծ խնդիրները: Իմաստասիրական այս այլեւայլ հաստատութիւնք կոչուեցան զանազան անուններով, Յոնիական Դպրոց, Իտալական Դպրոց, Եղէական Դպրոց, Ատոմական կամ Հիւլէական Դպրոց, Սոփիստական Դպրոց, Կիւնիկեան կամ Շնական Դպրոց, Արիստոտէլեան կամ Պէրիպատիկեան (Ճեմականաց) Դպրոց, Պլատոնեան Դպրոց կամ Ակադեմիա, Ստոյիկեան Դպրոց կամ Սրահական, Եպիկուրեան Դպրոց, Սկեպտիկեան Դպրոց,

Ընտրողական կամ նոր-Պլատոնեաներու Դպրոց, Բրիտտոնէական Դպրոց, ևւն: Սոյն եւ յաջորդաբար յիշատակելի փիլիսոփայական դպրոցներէն կամ աղանդներէն իւրաքանչիւրին վրայ զատ զատ պիտի խօսինք իրենց կարգին Հանրագիտակի Իմաստասիրական Բառարանը կազմող յօդուածոց մէջ, որոց շարունակութիւնն ու ամբողջութիւնը պիտի բովանդակեն Փիլիսոփայական գիտութիւնն ու Փիլիսոփայութեան պատմութիւնը:

* *

Միջին Դարու մէջ, փիլիսոփայութիւնը, որ Սֆոլասիկ անունը կ'առնու, նախ բոլորովին Աստուածաբանութեան ստորակարգեալն է, Անոր Աղախնը: Երկար ատեն Արիստոտէլի վրայ մեկնութիւններ չինելով կը քէշնուի, տակաւ առ տակաւ իր ստրկական թապտկանքէն կը զերծանի, կ'ազատագրի, կը յարուցանէ Ապէլարը ԺԲ. Դարուն, Մեծն Ալպէրդը եւ Ս. Թոմասը՝ (հրեշտակային վարդապետը) ԺԳ. Դարուն, Օգգամը ԺԴ. դարուն, եւ յաջորդ երկու դարերուն մէջ՝ Դպրութեանց եւ Արուեստից Վերածաղկումի (Renaissance) դարուն ներհունները եւ մտքի ու լեզուի վերանորոգիչները: Պասարիոն, Փլէթոն, Մարսէլ Ֆիսին, Գանրանելլա, Ժ. Պրիւս, Վանինի եււն: Վերջապէս ԺԷ դարուն կ'երեւին, Պագոն՝ Անգլիոյ մէջ, և Տէգարդ՝ Ֆրանսայի մէջ, եւ կը վերանորոգեն ու արդի փիլիսոփայութիւնը կը հիմնարկեն: Առաջնոյն կը հետեւին Հոպ, Կասանդի, Լօք, Վոլդէր, Գոնտիլէադ, Գապանի, ևւն: աւելի վերջերը Թրասի և Լարոմիկիէր, ամենքն ալ փորձառական փիլիսոփայութեան դրօշմով կնքուած, աւելի կամ նուազ անսացող զգայարանաց վկայութեանը:

Երկրորդին կը հետեւին, կամ նման ուղիով թեմամբ կ'ընթանան, Բօր-Րուայալի (Արքայական Սրահի) մենակեացները, Մալպարանշ, Ֆէնէլոն, Պասկէ, Լայպնից, Գանդ և իր բազմանդամ դպրոցը, Ֆիսթ, Շէլինկ, Հէկէլ ևւն: Այս իրարու ներհակ դրութեանց մէջ կը տեղաւորուին ԺԸ. Դարուն մէջ Սկովտացիք, եւ մեր օրերուն՝ Ֆրանսայի մէջ Ռուայէ-Գոլլար, Ժուֆ-

րուա, Գուգէն, Տամիրոն, եւլն:

Փիլիսոփայութեան բոլոր դրութիւնները՝ իրենց բազմաթիւ աղանդներուն եւ իրենց առերեւոյթ պէսպիսութեան կամ տարբերութեան հակառակ, կը բաժնուին հինգի. 1. Գաղափարականութիւն (Idéalisme), Փորձառականութիւն (Empirisme), Սկեպտիկականութիւն (Scepticisme), Մորհրդականութիւն (Mysticisme), եւ 5. Ընտրողականութիւն (Électicisme):

Փիլիսոփայութիւնը, դիտելով իր արդի վիճակին մէջ, և բաղդատմամբ երբեմնի ունեցած կացութեան, անկարելի է ուրանալ ու երախտագիտութեամբ չյիշել այն զարգացումներն ու յառաջդիմական ջանքերը զոր կատարած է թէ՛ ընդհանուր մարդկութեան եւ թէ՛ անհատին բարւոյն համար. իր յառաջդիմութիւնք զգալի են նամանաւանդ հոգեբանական դիտողութեան խնդրոց մէջ, եւ այն ամէն խնդրոց մէջ որք կը վերաբերին գիտութեանց, լեզուի, ընդհանուր Բերականութեան, ինչպէս նաեւ ընկերական բարոյականի հարցերը քրքրելու, ուսումնասիրելու մէջոտին:

Իմաստասիրական այս բարերար ու փըրկագործ զարգացումները մասամբ կը պարտինք Գոնտիյէագի Դպրոցին հանճարեղ աշխատակիցներուն. բայց մանաւանդ սկովտական փիլիսոփաներուն՝ Թ. Ռէտի եւ Տիւկալդ Սքուարդի երկայնամիտ ու յամառ խուզարկութեանց, հետազոտութեանց, ասոնց աշակերտ ու հետեւող Ժուֆրուայի, ինչպէս նաեւ Գուգէնի վերանորոգած ու յանձնարարած այն իմաստուն ընտրողականութեան որ, Գիտութեան Պատմութեամբը լուսաբանուած ամէնէն աւելի ներհակ դրութեանց մէջ բովանդակուած ճշմարտութիւնները քաղելու ու հաշտեցնելու դիւրոյթ, միջոց ու գործիք հանդիսացաւ:

Ով որ կը փափաքի Փիլիսոփայական գիտութեանց վրայ աւելի ընդարձակ հմտութիւն ու տեղեկութիւն ստանալ, բացի վերեւ յիշուած իմաստասէրներու ինքնագիր գործերէն, կրնայ իրեն խորհրդատու առաջնորդ ընտրել, Philosophie de Séguay de Lemonnier, Philosophie de Lyon անուն գրքերը: Ֆրանսերէն իմաստասիրա-

կան քիչ գրուածներ կան որք լիովին յագեցնեն. ամէնէն աւելի ծանօթներն են Les leçons de philosophie de Laromiguière (որ միայն հոգեբանութեան եւ տրամաբանութեան քանի մը խնդրոց վրայ կը խօսին), Les éléments d'Idéologie de Destuti-Tracy, Les leçons de philosophie de Flotte (պարզ բանաբաղում մ'է այս), Le Cours de philosophie de M. Samison (միակը՝ որ գիտութեան բոլոր մասերը կը բովանդակէ) եւ առձեռն կամ համառօտեալներուն մէջ ալ՝ Le Manuel de philosophie de M. M. Jacques, Simon et Saisset և Le Précis d'un cours élémentaire de Philos, par M. Ch. Bénard, 1845 et 1851: Դարուս վերջին կիսուն մէջ եւս Ֆրանսացի շատ մը հեղինակներ գերմանացի, սկովտացի կամ անգլիացի իմաստասէր հեղինակաց նման հրատարակած են կարգ մը փիլիսոփայական գիտութեանց պապակն ու փափաքն յագեցնող ընտիր գործեր, որոց թուարկումն աւելորդ է:

(Շար.)

Ա. Լ.

ԲՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԻՆՐ

ԵՐԳ.

Ա.



ՈՐԻՒՍ մէջ երկու խորհուրդ ծաւալի, Մին է բնութիւն, ա՛հ, միւսն է կին ցանկալի. Պատմութեան մինչեւ սրտի եզերքն վառ յատոնց երգովը լեցուած է իբր կամար. Ես Անմահին բացատրութիւն չեմ գիտեր, Հունաւորինն անգամ զըտնեմ ինձմէ վեր. Ա՛հ, ի՞նչ ըսեմ, Հոգիս մըրքկի՛ գերդ հեղեղ, Անոր համար հընչէ բընա՛րըս յիւրեղ, Որու անուն «ՍԻՐՏ» է կ'ըսեն աստղերն ինձ, Ուր արցունքներս երգ կը ծընին խինձէ խինձ: Տիեզերքը՝ վսեմ սիրերգն Արարչին, Մտքիս խորերն լնու աստղով շանթածին. Գարծնս նեկտար մ'ըլլան Բնութեան վիհերն կուռ, Գինովցընեն հոգիս ու սիրտս համակ հուր. Անոնք ինքնին Որփէսսի մը հանգոյն, Երգեն ու լան պէս կապոյտին ծովերուն:

Ք

է՛ Բնութիւն, դեռ պիտի՞ փորե՞ս ինձ անգունդ,
Ալքերուդ մէջ լի դանդաղ անձնուկ,
Խոկերուս տակ մէկ մէկ երկին կը ծընի,
Բոյլերուդ տակ — գերեզմաններ հըրէջի.
Ես ամէն օր, ամէն վայրկեան կը խոկամ
Վախճանիդ վրայ՝ ուր արցունք կոյ անթարշա՛ւ.
Աչերուս մէջ արցունքիս խորն կը զըծուիս,
Երազներու զղեակին պէս բոցահիւս.
Այլ հոգիէս արձագանգներդ կը լսեմ
Որք սիրահար սըրտիդ երգերն են վրսեմ,
Ես չեմ ուզեր զահալիծիլ խորքիդ մէջ,
Մարած աստղի ածիւնին պէս մահաշէջ.
Գաղափարի կայսերութեան կը բաղձամ,
Ուր՝ Ասիա իր իղծերովն աննաւամ,
Դեռ կը յուսայ գահակալել իբր կախարդ,
Աւաղ... Եւրոպ կը հմայէ զայն դէմքովն վարդ.
Կը հիանամ արարածի մը վըրայ,
Որուն լանջքը իր պերճանքովն մարմարեայ,
Քենէ վըսեմ, քենէ անհուն ինձ ձուի,
Անոր համար մըմնչեմ ես պէս ուրուի.
Ո՛ր Բնութիւն, տարբերուդ խոր նըշմարեմ,
Յաւերժական լըռութիւն մը վըհին դէմ...
Անեզր լոյսի քաւոսիդ մէջ բառ մը կայ.
Ա՛հ, «Կեն» է նա, աստղերու նըզն հըսկայ.
Ձքի՛ց անոր հետ կը բաղդատեմ երգիս մէջ,
Ձի աշն ալ ինձ ցոյց տայ Անհունն՝ Սէրն անշէջ.
Եթէ զիշերն ըլլայ սիրտ մը քերթողի,
Քու խորհուրդներդ ոյք են ծովեր կատաղի,
Ձը պիտի՛ կըրնան սանձել լ՛երգել Բնութիւն,
Այլ թո՛ղ ներեն ինձի աստղե՛րըդ անհուն,
Յախուռն եմ ես՝ առեղծուածի սիրահար,
Շարունակեմ ուրեմն ուղիս անդադար.
— Կինը աշխարհն է դըրախտի դալարուտ,
Անոր ծոցէն մարգարիտներ փըթիին շուտ,
Պէս զիշերուան լանջքէն ծնած աստղերուն.
Ուր քերթողներն կը խոյանան աննըկուն.
Կինն՝ մարդկութեան անկերպարան ծովն է Սէրն.
Անոր այրէն հըրաշալիք սլանան վեր,
Հրաշալիքն ա՛յդ անդունդին է գոհար,
Յօդով՝ բոյրով առլի եղեմն է այն վառ.
Ո՛հ, մէն մի դար իր դափնիներն հոն նետէ,
Ինչպէս արեւն իր շողերը կըրակէ,
Սըփռէ ներա անհուն զիրկը երեւուն,
Ուր Յանկութիւնն գտնէ դամբան սրտերուն...
Կոհակի պէս ներա սրտէն հուր տեղայ,
Ջըրհեղեղի փոթորկումովն անխընայ,
Աչերն նմանին ալիքներուն ծովերու,
Շողով՝ սիրով յըղի՛... ծրփան դեռ հեռո՛ւ...
Մարդկութեան տենցն հոն իր գահո՛յքը տեսաւ,
Ջոր դարերէ ի վեր խուզէր իբր մի նաւ,
Որ անդունդին վըրայ ծրփայ ու խըրի՛...
Հողմի թեւով՝ մարդու տենցով բընարի.
Ա՛հա՛ կինը մարդկութեան կեանքն ու մա՛հն սեւ,
Կեանքին՝ դըրախտ, մահուան՝ դըժոխք սըրաթեւ.
Ըսին Սեմի վարդապետներն երազուն,
Որոնց զըլուխն յուզէր խորհուրդ մը անհուն:
(Շար.)

Մ. Թ.

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

3. Զգայարաններու դասնիարակութիւնը

(Շարունակութիւն ԺԹ քիւէն)

ԼՍՈՂՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԼՍԵԼԻՔ

Աւասիկ քանի մը ուղղութիւններ և միջոցներ որք խողովեան զգայարանները կատարելագործելու պիտի օգնեն:

1. Տղայոց համար պէտք է զգուշանալ սուր, բարձրաճիւղ եւ չափազանց ուժգին աղաղակներէ, մանաւանդ եթէ այդ ձայներն անոնց պիտի հասնին յեղակարծ եւ առանց պատրաստութեան: Այդ կարգի աղաղակները, երբ ականջին մօտ յառաջ գան, մինչեւ իսկ կրնան խանգարում եւ խզտում պատճառել ականջին մէջ, կամ գէթ մասնակի անդամալուծել անոր գործունէութիւնը:

2. Պէտք է տղայոց արգիլել սուր եւ բարձրաճիւղ ձայներ, տարաձայն ու աններդաշնակ աղաղակներ հանելու ունակութիւնները, որք կրնան ականջը խանգարել:

3. Այս նախահոգ զգուշութիւններէն զատ, ուրիշներ ալ պէտք է ձեռք առնել, որոցմէ ոմանք մասնաւորապէս ականջին կը վերաբերին եւ ոմանք ալ ձայնին: Այսպէս, օրինակի համար, քանի առիթը ներկայանայ, պէտք է տղաքներն ուշադիր ընել այն դանազան ձայներուն որք յառաջ կուգան դաշտերու ծոցը, սովրեցնել անոնց գանազանել ու գնահատել զանոնք, եւ մանաւանդ ըմբռնել հեռուէն եկող սկար ձայները:

4. Պէտք է վարժեցնել տղաքը դասուլու ձայնի մը ուղղութիւնը եւ հեռաւորութիւնն այն առարկային որ այդ ձայնը յառաջ կը բերէ:

5. Գալով ձայնին, պէտք է մանաւանդ

դասերու ատեն, եւ գլխաւորաբար ընթերցանութեան եւ գրուցատրութեան ատեն, վարժեցնել տղաքը՝ բառերն արտասանելու յստակ եւ որոշ կերպով մը (բայց առանց արուեստակութեան), հասկցնելով անոնց արտասանութեան եւ շեշտի, ոլորակի պէս-պիսութիւնները, ինչ որ անուղղակի կերպով շատ լաւ պիտի մարզէ անոնց լսողութեան գործարանը։ Միեւնոյն պատճառներով պէտք է վարժեցնել տղաքը կարգալու այնպիսի եղանակաւորումով մը որ յարմարի այն զգացմանց ու մտածութեանց գործընթացները կը բացատրեն։

7. Կը մնայ ամենէն կարեւոր միջոցը, այն է երաժշտութեան ուսումը։ Բայց մեր հոս առաջադրած մասնաւոր նպատակին հասնելու համար, պէտք է երաժշտութիւնն ուսուցանել ոչ այնքան իբրեւ գիտութիւն մը, որքան մանաւանդ իբրեւ երգի գործնական ու կիրառական վարժութիւն մը, նա մանաւանդ սկիզբները։ Շատ երգել տալ, եւ ի հարկին հակադրութեամբ ըմբռնել տալ ձայնական ելեւէջներու մանր զանազանութիւնները (nuance), ականջը կրթել, ձայնը դիւրաթեք դարձնել, քաղցրացնել, յղկել, ողորկել, ահա ինչ որ էապէս կարեւորագոյնն է։

ՇՕՇԱՓԵԼԻՔ

Շօշափելիքը կը ծառայէ, ինչպէս ըսինք արդէն, ուրիշ զգայարանքներու մասին մեր գնահատութիւնն ուղղելու։ Ասկէց զատ, կարելի եղածին չափ անոնց տեղը կը բռնէ, երբ վայրկեանական կամ յարատեւ պատճառներով կորսնցնենք զանոնք։

Աւասիկ քանի մը գործնական հրահանգներ, որք պիտի կրնան ծառայել փութացնելու այս զգայարանքին դաստիարակութիւնը, եւ կատարելագործելու զայն։

1. Ամէն բանէ առաջ, որպէս զի շօշափելիքը պահէ իր փափկութիւնն ու նրբութիւնը, ձեռքերուն մորթին ամբողջութիւնը պէտք է պահպանել, առանց սակայն տալապայման կերպով փափկացնելու։

2. Պէտք է տղայոց շօշափել տալ բազմաթիւ ու այլազան առարկաներ (որոնցմէ

կրնանք փոքրիկ հաւաքածոյ մը կազմել դըպրոցին մէջ), եւ վարժեցնել զանոնք դատելու այդ առարկաներուն ձեւը, բարեխառնութիւնը, ծանրութիւնը, փայլը, եւ այլն։ Այն առարկաները, որոնց վրայ խօսեցանք տեսողութեան առթիւ, շատ լաւ կրնան ծառայել այս վարժութեան։

3. Երբեմն պէտք է շօշափելիքէն բառնալ աչքի եւ մինչեւ իսկ ի հարկին ականջի օժանդակութիւնը, այսինքն պէտք է տղաքը վարժեցնել գոց աչքով զանազանելու իրարու բաւական նման, բայց ինչ ինչ նկատմամբ տարբեր առարկաներ։ Այս բանին համար, կրնանք օգուտ քաղել աչկապուքի խաղէն, ինչպէս նաեւ հետեւեալ վարժութենէն։

4. Շատ կարեւոր ունակութիւն մ'է մութի մէջ քալելու ունակութիւնը, զոր պէտք է տղաք ստանան թէ՛ դիւեր ատեն մութի մէջ քալելով եւ թէ՛ ցերեկ ատեն աչքերու վրայ դրուած կապի մը միջոցաւ։

ՀՈՏՈՏԵԼԻՔ ԵՎ ՃԱՇԱԿԵԼԻՔ

Հոտոտելիքն ու ճաշակելիքը նուազ կարեւոր են քան միւս զգայարանքները, այն անորոշ ու տարտամ ծանօթութեանց պատճառաւ զորս անոնք կուտան մեզ՝ արտաքին առարկաներու վրայ։ Միւս կողմէ, որովհետեւ շատ մօտէն առնչութիւն ունին զգայասիրութեան (sensualité) հետ եւ անոնց տարապայման զարգացումը կրնայ ցաւալի արդիւնք ունենալ բարոյականի տեսակէտով, անոնց նկատմամբ խորհուրդ կուտանք զգոյշ կենալ, եւ մարդել զանոնք մանաւանդ այնպիսի կերպով մը որ մարդուս համար կեղծ ու անբնական փափկասիրութեան պատճառ մը եւ տառապանքներու աղբիւր մը չդառնան։

ԳԼՈՒՆ Բ.

ԻՄԱՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Շար.)

Մ.



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ը Ն Դ Ե Ղ Է Ն Ք

Ընդեղեններն այնպիսի բոյսեր են որոնց պտուղը պճեղ (gousse) մ'է ոլուռի պճեղին պէս: Անոնք որ մեծ քանակութեամբ կը մշակուին մարդուս սնունդին համար, են գլխաւորաբար լոփիասը կամ լուբիան, ոլուռ եւ ոսպը:

Ընդեղենները բազմաճիւղ ցողուններ եւ բազմաթիւ տերեւներ ունենալով, հեղձուցիչ են, այսինքն չեն թողուր որ ուրիշ խոտեր աճին իրենց շուրջը: Ուստի անոնք կը ընկատուին իբրեւ լաւ պատրաստութիւն մը արմտեաց մշակութեան: Ընդեղենները, մանաւանդ փոխմշակութեան մէջ, մեծ օգուտ կ'ընծայեն ապա արտիքներու մշակութեան որովհետեւ իրենց պէտք ունեցած ազօղը մթնոլորտէն փոխ առնելով, տրամադրելի կը թողուն այն բովանդակ ազօղը զոր հողը կըրցած էր ընդունիլ աղբերէն: Ասոր փոխարէն, անոնք կը պահանջեն մանաւանդ բոդասի աղբ: Բօդասի քլօրուտը, մոխիրը, խաղողին չիւը (հիպրէ) ուրեմն այն արգասաւորիչ նիւթերն են զորս պէտք է տալ անոնց՝ նախապատուութեամբ: Սակայն եւ այնպէս զգուշանալու է բոդասի գործածութիւնը չափազանցելէ, որպէս զի միւս պարարտութիւնները — ազօղ, փոսփորային թթու, կիր — բաղդատաբար չափազանց փոքր քանակութեամբ չգտնուին: Այդ պարագային մէջ բոդասն ինքնին ուրիշ բանի պիտի չծառայէ բայց միայն բոյսին սնունդին:

ԼԼՈՎԻՍՍ. — Լոփիասները կը բաժնուին երկու մեծ դասակարգի. բարձրացողուն կամ պատատուկ լոփիասները (haricots ramants) որք խեչակով կամ ծառի ոստերով պաշտպանուելու պէտք ունին, եւ թզահասակ լոփիասները (haricots nains) որք խուրճ խուրճ կ'աճին 0,30էն մինչեւ 0,40 հարիւրորդամէդր բարձրութեամբ: Առաջիններն աւելի արդիւնաբեր են:

Թզահասակ լուբիաները, պարտէզէն դուրս, յաճախ կը անկուին գետնախնձորի տունկերուն կամ որթատունկերուն մէջտեղերը: Երբ լոփիասի ընդարձակ մշակութիւն մ'ընել ուզուի, պէտք է ընտրել թեթեւ ու փխրուն այլ հիւթեղ ու քիչ շատ խոնաւ հողը, զոր լաւ պատրաստելու է Լոփիասը սառնամանիքէն կը վախնայ: Ուստի Մայիսին եամ Յունիսին կը ցանեն լաւ աղբուած հողի մէջ, կարգ կարգ եւ իրարմէ 0,35—0,40 հարիւրորդամէդր հեռաւորու-

թեամբ, ըստ տեսակին, եւ 0,20—0,25 հարիւրորդամէդր իրարմէ հեռու աչեւու մէջ (poquet, օնագ) 5—6 հատիկ: Էքզար գլուխ գործածուելիք սերմին քանակութիւնն է իբր 150 լիտր, որք իբր 30 հարիւրալիտր լուբիա կուտան: Լոփիասը քանիցս կրկնաբորուելու կամ քաղահան ըլլալու պէտք ունի:

Լոփիասի մշակութիւնը սնունդի մեծ աղբիւր մ'է: Լոփիասը կ'ուտուի կանանչ կամ չոր: Առողջ ու սննդաբար կերակուր մ'է: Լոփիասի տեսակները շատ են, զորս ամէն ոք կը ճանչնայ, առանց մոռնալու անց գասրնը, պարպուցեան, Լուբիաներ կան որոնք կանանչ փոծոկով չեն ուտուիր, կան ալ որոնց թէ՛ փոծոկը (կանանչ պատեան) եւ թէ՛ հատիկը կ'ուտուին:

ՈՒՈՒ (Պեզէլիա). — Ոլուռն ալ, լոփիասին պէս, երկու դասակարգ է, բարձրացողուն եւ թզահասակ: Ոլուռն մշակութիւնը նոյն է լոփիասին մշակութեան հետ, բայց որովհետեւ ոլուռ սառնամանիքէն չի վախնար, կրնանք մշակել զայն Փետրուարէն մինչեւ Մայիս: Կարգ կարգ եղած սերմանումը նախամեծար է. քաղահանը եւ մանաւանդ ցողունին տակը հողով պատելու գործողութիւնը կը դիւրացնէ, որոյ նպատակն է բոյսերը պաշտպանել երաշտութեան դէմ: Երբ ոլուռն տունկերը 0,20—0,25 հարիւրորդամէդր բարձրացած են, ցողունին տակը հողով կը պատեն: Ոլուռն ալ, լոփիասին պէս, հասոյթի մեծ աղբիւր մ'է երկրագործութեան համար: Տանտիկիները գիտեն անով պատրաստուած կերակուրներուն տեսակները: Լոփիասին պէս ոլուռն ալ բազմատեսակ է, զորս մշակները լաւ կը ճանչնան:

ՈՍՊ (Մեքսիմեք). — Ոսպին ցողունը բազմաճիւղ է եւ բարակ, բայց խեչակի պէտք չունի: Փոծոկը կամ պարկուճը փոքր է, եւ երկու կամ երեք հատ կլոր եւ սկաւառակի ձեւով տափակցած հատիկներ միայն կը պարունակէ: Շատ տեսակ ոսպ կայ, որոնց ամէնէն ծանօթներն են՝ խարսեաւ, կանանչ, կարմիր տեսակները: Ոսպը կը սիրէ փխրուն, չոր ու կրային հողերը: Խոշոր ալիւրի վերածուելով, ոսպն ախորժանօք կ'ուտուի աւստուններէն, կ'օգնէ անոնց արագ պարարտացման. ոսպին յարգը կրնայ գործածուիլ իբրեւ չոր խոտածարակ, մանաւանդ ոչխարներուն համար:

(Շար.)

Բ. Պ.

Արտոնագր. — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ


Գին 5 Ղրու

800 փոքրագույն երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ոճերու եւ ընթացական ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր գաւկի՛ն ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 գեղջ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի տնօրէնութեան:

ՆԻՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Ուսողութիւնն գործարանի մարտի



Որ կը մըցի բոլոր կարի մե-
քեաներուն հետ

Իր պարզութեամբ

Տոկունութեամբ

Արագութեամբ

Թեթեւութեամբ

Աժանութեամբ

Թուրքիոյ միակ ներկայացուցիչ
ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնացեալի. — Սիրքէճի, Բէօքրիւլի
խան, թիւ 3:

Մասնաճիւղ. — Ղալաթիա, Պէօլիւք Միւ-
լէթ խան, թիւ 33:

Գնողներու համար վճարման ամէն տե-
սակ դիւրութիւններ:

ԱՌԵԻՐԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՒՆ ԹԷՅԻ



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ
Վ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՄԵՐԱՔԱՆԱԿ ՃՈՒ ՄԹԵՐԳ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

Որոշ եւ չափաւոր գին

Պահճէ գաբու, ձէլալ պէլ խանի տակ

Թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառի մեր պատ-
ուարժան ընթերցողներուն կը յանձնարա-
րենք սոյն վստահելի վաճառատունն, որ
երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիրք
մը գրաւած է, և ամէն տարի չի զլանար իր
թէյի նուէրը՝ ի նպաստ կարօտելոց:

Վստահաբար դիմեցէ՛ք և պիտի չզրդ-
ջաք: — Վաճառատան մարգային ուշ դրէ՛ք:

ԿԱՌԵԻՐՈՐ ԱԶԴ. — Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատ-
կացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուել, կրնան
իրենց ծանուցումները ԶՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան
համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ և տարեկան:

ԻՍԹԸՐՆԳԱՌԻՆԹԻՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընդդեմ հրդեհի ի «ՀԸԼԼ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 7,250,000

ԱԼԼԷԱՆՁՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց եւ արկածից ի «ՃԷՆՈՎԱ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 87,455,645

Ընկերութեանց Դրամատունն է «Քրէտի Լիօնէ»,

ՌԷՆԱՆ—ՎԵՍՏՐԱԼԻԷՆ

ԾՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի Կլատպաի

Դրամագլուխ եւ Պահեստ Ֆր. 6,250,000

ԳՐԱՍԵՆՆԱԿ.— Ստամպուլ, Հաճօքուլօ Խան, Թիւ 53, 54, 55, 56

Լիազօր Ներկայացուցիչ

Գ. ՍԵՐԱՏԵԱՆ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՅՐԴԵՅՔ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին

34,775,642 ֆրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեալի, Քարափին վրայ, Մախասան հին տեղը

Ընդհ. ֆոնիչ
Ա. ՀԻՐՄԻՒՋ

Ընդհ. Դործակալ
ԹԷՈՑՈՐ ՌԷՐԲԷՆ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Հանրագիտակի վերաշեւեալ ամենգրութիւն պէտք է ուղղել Նեան Պերպերեան
սպարանը, Էսֆի զապրիյէ հասէսի թիւ 61, առ Տնօրէնութիւն
եւ Խմբագրութիւն Հանրագիտակի